Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2025-2026 ուստարի)
10-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. Ե՞րբ է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունել Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին որոշումը:

1) 1990 թ. օգոստոսի 23-ին
2) 1991 թ. սեպտեմբերի 21-ին
3) 1991 թ. սեպտեմբերի 23-ին
4) 1990 թ. օգոստոսի 21-ին

2. Վանի թագավորության ո՞ր արքայի գործունեության մասին է պատմվում «Խորխոռյան տարեգրության» մեջ:

1) Արգիշտի I-ի
2) Սարդուրի II-ի
3) Մենուայի
4) Իշպուինիի

3. Ո՞ր բնակավայրը ազատագրվեց 1992 թ. մայիսի 8–9-ին «Հարսանիք լեռներում» ռազմագործողության արդյունքում:

1) Մարտակերտը
2) Շուշին
3) Կրկժանը
4) Բերձորը

4. Որքա՞ն էր կազմում Տիգրան Մեծի ստեղծած հայկական աշխարհակալ տերության ընդհանուր տարածքը (ներառյալ ենթակա երկրները) իր հզորության գագաթնակետին:

1) 500.000 քառ. կմ
2) 4 մլն քառ. կմ
3) 300.000 քառ. կմ
4) 3 մլն քառ. կմ

5. Ո՞ր պաշտոնյան էր գլխավորում Արշակունյաց արքունի պահակազորը և հոգում թագավորի անվտանգությունը:

1) Մարաջախտը
2) Մաղխազը
3) Մարդպետը
4) Սենեկապետը

6. Ո՞ր թվականին է հիմնադրվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

1) 1824 թ.
2) 1871 թ.
3) 1874 թ.
4) 1881 թ.

7. Ո՞վ էր հայոց զորքերի հրամանատարը Օշականի Ցլու գլուխ բլրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

1) Մուշեղ Մամիկոնյանը
2) Վաչե Մամիկոնյանը
3) Վասակ Մամիկոնյանը
4) Մանվել Մամիկոնյանու

8. Ե՞րբ է Հռոմը միացել Իտալիային և հռչակվել մայրաքաղաք:

1) 1851 թ.
2)1861 թ.
3) 1871 թ.
4) 1877 թ.

9. Ո՞վ է «Չմիացած երկրների շարժում» կազմակերպության հիմնադիրներից:

1) Մահաթմա Գանդին
2) Դեն Սյաոպինը
3) Ջավահարլալ Ներուն
4) Մաո Ցզեդուն

10. Ո՞ր տարածքն է միացվել Գերմանիային Մյունխենյան գործարքի արդյունքում:

1) Լոթարինգիան
2) Սուդեթը
3) Լյուքսեմբուրգը
4) Գդանսկը

Կարճ պատասխանով առաջադրանքներ

11. Ընտրե՛ք ճիշտ պնդումները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա) Պարթևները Բակուր Արշակունու Հայոց գահին բարձրանալը համարել են Հռանդեայի պայմանագրի խախտում և գահընկեց են արել նրան:

բ) Բուն Հայոց տոմարի սկիզբ է համարվում Ք. ա. 2492 թ. օգոստոսի 11-ը, երբ Նոյ նահապետը իր ընտանիքով հանգրվանեց Արարատ լեռան վրա:

գ) Ք. ա. 36 թ. Արևելք ժամանած Մարկոս Անտոնիոսը իր տրամադրության տակ եղած 100-հազարանոց բանակը և ողջ տեխնիկան կենտրոնացրել է Կարին գավառում:

դ) Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի հետևանքով Պարթևստանին է միացել Հյուսիսային Միջագետքը:

ե) Գահակալման վերջին տարիներին Տիգրան III-ը ձերբազատվել է Հռոմի վերահսկողությունից և հատել է պահլավերեն մակագրությամբ դրամներ:

զ) Պարթևստանում ապաստանած թագաժառանգ Արտաշեսը ամուսնացել է Հրահատ IV-ի դստեր հետ և ստացել ռազմական օգնություն նրանից:

է) Արգիշտի I-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:

12. Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են սխալ *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա) Հռոմում հոգևոր գործառույթներ իրականացնող քրմապետն անվանվում էր մեծ պոնտիֆիկոս:

բ) Արշակունյաց արքունի կալվածքների ու գանձարանի ղեկավարությունն իրականացնող գործակալն անվանվում էր հազարապետ:

գ) Հին Հռոմում ազնվականների՝ ավագների ժողովը կամ խորհուրդն անվանվում էր գերուսիա:

դ) Հայաստանի վաղմիջնադարյան առևտրական ճանապարհների մասին տեղեկություններ պարունակող Կաստորիոսի կազմած քարտեզ-ուղեցույցն անվանվում է Պևտինգերյան:

ե)Արտաշես I-ի կողմից համայնքային և մասնավոր (ագարակներ) հողատարածքների միջև տեղադրված քարե կոթողները կոչվում են հողաբաժան սահմանաքարեր:

զ) Հին Հունաստանի պատմության Ք. ա XII-IX դդ. ընդգրկող ժամանակաշրջանն անվանվում է Դասական կամ ոսկե դարաշրջան:

է) Հին հույները, ապա հռոմեացիները իրենց երկրներից դուրս ապրող այլ ժողովուրդներին անվանում էին բարբարոս:

13. Ընտրե՛ք Պապ թագավորի քաղաքական ձեռնարկումների պատճառներն ու հետևանքները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա) Եկեղեցական հողերի մեծ մասի առգրավում հօգուտ պետության՝ թագավորության տնտեսական ուժը վերականգնելու նպատակով:
բ) Հռոմեական կայսրության հետ համաձայնությամբ սահմանային նահանգների կառավարման հանձնում հռոմեացիներին՝ դաշնակցային հարաբերությունները ամրապնդելու նպատակով:
գ) Մենաստանների զգալի մասի փակում, կույսերին ամուսնանալու թույլտվություն՝ բնակչության կորստի վերականգման և ծնելիության բարձրացման նպատակով:
դ) Հոգևորականների ընտանիքների համար հատուկ արտոնությունների սահմանում՝ աշխարհիկ գործերում հոգևոր խավի ներգրավվածությունը նվազեցնելու նպատակով:
ե) Հայոց Եկեղեցու անկախացմանն ուղղված գործունեություն՝ օտար ուժերին Հայաստանի ներքին գործերին միջամտելու հնարավորությունը արգելափակելու նպատակով:
զ) Նախարարների դիրքերի թուլացմանը միտված քաղաքականություն՝ նրանց հարկային բեռը մեծացնելու և պետական վերահսկողությունը ուժեղացնելու միջոցով:
է) Եկեղեցական հողերի բռնագրավումից հրաժարում և միայն հոգևորականների թվի կրճատում՝ եկեղեցու հետ բաց հակամարտությունից խուսափելու և երկրի ներքին կայունությունը պահպանելու նպատակով:

Վերլուծական հարցեր

14. Լրացնե՛լ բացթողնված հատվածները *(յուրաքանչյուրը 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր)*:

Հայ-հռոմեական պատերազմի ընթացքում հռոմեական զորքերը անսպասելի ներխուժեցին Հայաստան և շարժվեցին դեպի Տիգրանակերտ: Տիգրանակերտի կայազորը (1) ---------- (ո՞ւմ) հրամանատարությամբ հմտորեն պաշտպանելով քաղաքը, հետ է շպրտում հռոմեական գրոհները: Տիգրան Մեծը թշնամու առաջխաղացումը կասեցնելու նպատակով ուղարկում է ընդամենը 3 հազարանոց հեծելազոր՝ (2) ---------- (ո՞ւմ) գլխավորությամբ, որն անհավասար մարտի պայմաններում պարտվում է: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ (3) ---------- --- (ե՞րբ): Փոքրասիական ծագումով, առավել չեզոք պատմիչների հաղորդումների համաձայն՝ հայոց զորքի թիվը կազմում էր (4) ---------- (ինչքա՞ն) զինվոր, սակայն հռոմեացի զորավար (5) ---------- (ո՞վ) կարողացավ հաղթանակ տանել՝ օգտվելով նաև քաղաքում եղած օտարազգիների դավաճանությունից:

15. Համապատասխանեցրե՛ք Արշակունի արքաներին նրանց ձեռնարկումների հետ։
(Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)

Արքա	Քաղաքական/Դիվանագիտական ձեռնարկում
1. Տիրան	ա. Կարգավորեց հարաբերությունները Հռոմի հետ՝ ստանալով գումար հայոց այրուձիի համար, որն իրականացնում էր Կովկասյան լեռնանցքների պաշտպանությունը լեռնական ցեղերից։
2. Վաղարշ II	բ. Միջամտեց Հռոմում ծավալված զահակալական պայքարին՝ օգնական զորք ուղարկելով Կոստանդիոս կայսրին, ինչն առաջացրեց պարսից արքայի զայրույթը և հանգեցրեց արշավանքի։
3. Խոսրով III Կոտակ	գ.Պարսպապատեց Վարդգեսավան բնակավայրը, վերանվանեց այն իր անունով և արքունիքը տեղափոխեց այդ նոր մայրաքաղաք։
4. Խոսրով I	դ. Մահապատժի ենթարկեց դավաճան նախարարներին, որոնք պարսկական ներխուժման ժամանակ անցել էին թշնամու կողմը։
5. Տրդատ II	ե. Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսրը նրան վերադարձրեց կապադովկիական կալվածքները։
	զ. Խաբեությամբ՝ ընտանիքի հետ միասին հրավիրվեց Անտիոք և ձերբակալվեց Հռոմի կայսրի կողմից, որը ծրագրում էր Հայաստանը դարձնել հռոմեական պրովինցիա։

1	2	3	4	5

16. Ճանաչի՛ր նկարը և ներկայացրո՛ւ իրադարձությունը *(2,5 միավոր)*:

1) Ո՞ր իրադարձությանն է նվիրված նկարը։ Ինչո՞ւ գումարվեց այն։
2) Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հրավիրվել այն։
3) Ի՞նչ որոշումներ են կայացվել (նշեք 2-ը)։

---

17. Նշե՛ք Ա. Մակեդոնացու արշավանքների և հելլենիստական քաղաքակրթության 2 դրական և 2 բացասական կողմ *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր):*

Դրական կողմեր	Բացասական կողմեր
1.	1.
2.	2.

18. **Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք ենթահարցերին.**

Աղբյուր 1. *«….Բացի այդ պայմանագրում արվեց շատ ավելի ծանր ուխտազանց մի հավելում, ըստ որի, այդ համաձայնությունից հետո, այլևս օգնություն չպիտի տրվեր մեր մշտական և հավատարիմ բարեկամ Արշակին ընդդեմ պարսիկների, եթե անգամ նա այդ մեզանից խնդրելու լիներ: Սրանում կրկնակի դիտավորություն կար. նախ պատժել այն մարդուն, որը կայսեր հանձնարարությամբ ավերել է Հիլիոկոմը և ապա սպասել հարմար ժամանակի՝ առանց դժվարության հարձակվելու Հայաստանի վրա:*

Եվ դրա հետևանքով էր, որ հետագայում երկպառակությունների և խռովությունների ժամանակ, այս Արշակը կենդանի գերի վերցվեց պարսիկների կողմից, և խլվեց Հայաստանից ընդարձակ մի երկրամաս, որը սահմանակից էր Մեդիային»:

Աղբյուր 2. *«…Եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:*

1. **Ո՞ր իրադարձությունն են ներկայացնում աղբյուրները, ո՞ր թվականին է կնքվել պայմանագիրը, ի՞նչ անվանում է այն ստացել** *(1 միավոր)*:

   ---

2. **Հայաստանի դեմ գործելու ի՞նչ հնարավորություն էր ստանում Պարսկաստանը և ինչպե՞ս օգտվեց այդ հնարավորությունից (նշե՛ք 2 գործողություն)** *(1 միավոր)*:

   ---

3. **Ինչպե՞ս է գերեվարվում Արշակ II-ը և ի՞նչ վախճան է ունենում** *(1 միավոր)*:

Պատմության օլիպիադայի

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

02.02.2026 թ.